ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՍՄԱ-ԳՀԱՊՁԲ-2024/2» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք.Կապան

06 սեպտեմբեր 2024թ
ժամը՝ 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Աբգարյան Մարինե -ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ (գնահատող անդամ)
Աթայան Նարինե - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ (գնահատող անդամ)
Համբարձումյան Մարի-ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության ավագ մասնագետ (բացող անդամ)
Բաղդասարյան Արփինե-ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի փորձագետ (բացող անդամ)

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 17:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՄԱ-ԳՀԱՊՁԲ-2024/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«ԻՄՓՐՈՒՎ»ՍՊԸ	04436817	ք.Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա	Improve.llc@bk.ru
2	«ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ»ՍՊԸ	02316284	ք.Երևան, Արտաշիսյան փ.40/8 բն.12	aregakgroup@gmail.com
3	«Կատյա Նազարեթյան»Ա/Ձ	57271907	ք.Երևան, Վ.Վաղարշյան 18 Ա 17	noy5842@gmail.com
4	«Դավիթ-94»ՍՊԸ	02211802	ք.Երևան, Դավիթ Անհաղթ 6/700	94.94.94.davit@gmail.com

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գնային առաջարկ			Նախահաշվային գին
		Արժեք	ԱԱՀ	Ընդամենը	
Չափաբաժին 1՝ էլեկտրոնային դաշնամուր					
1	«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ	1140000	228000	1368000	1500000
2	«ԴԱՎԻԹ-94» ՍՊԸ	1155000	0	1155000	

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գնային առաջարկ			Նախահաշվային գին
		Արժեք	ԱԱՀ	Ընդամենը	
3	«ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	1185000	0	1185000	
4	«Կատյա Նազարեթյան»Ա/Ձ	1250000	250000	1500000	

4. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝

- «ԻՄՓՐՈՒՎ»ՍՊԸ-ի ներկայացրած հայտում հավելված 1.1-ը լրացված չէ հրավերի պահանջներին համապատասխան, բացակայում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, արտադրողի մասին տեղեկատվությունը և տեխնիկական բնութագիրը,
- «Դավիթ-94»ՍՊԸ-ի հավելված 1.1-ում հստակեցված չեն առաջարկվող ապրանքի պարամետրերը՝ բասերը, բազմաձայնությունը, հնչերանգները, ռիթմերը, չափսերը,
- «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ»ՍՊԸ-ի հայտի հավելված 1-ը և հավելված 2-ը ՝ գնային առաջարկը, լրացված է այլ մրցույթի ձևաթղթերի վրա:

5. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

6. Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառվել է աշխատանքային օրը ուստի, հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվեց 2024թ-ի սեպտեմբերի 10-ին ժամը 12:00-ին ք.Կապան, Գ.Նժդեհի 1 հասցեում, որին մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Աբգարյան Մարինե
Աթայան Նարինե
Համբարձումյան Մարի
Բաղդասարյան Արփինե

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ

8. Հաշվի առնելով այն փաստը, որ «ԻՄՓՐՈՒՎ»ՍՊԸ-ի, «Դավիթ-94»ՍՊԸ-ի հայտում առկա են անճշտություններ, ապա **հանձնաժողովը որոշեց** մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել, էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

9. **Հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ»ՍՊԸ-ի հայտը, քանի որ գնային առաջարկը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, որն էլ շտկման ենթակա չէ:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվեց 2024թ-ի սեպտեմբերի 11-ին ժամը 16:00-ին ք.Կապան, Գ.Նժդեհի 1 հասցեում, որին մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝	Աբգարյան Մարինե
	Աթայան Նարինե
	Համբարձումյան Մարի
	Բաղդասարյան Արփինե
հանձնաժողովի քարտուղար՝	Գրիգորյան Սահականուշ

10. Սահմանված ժամկետում «ԻՄՓՐՈՒՎ»ՍՊԸ-ն և «ԴԱՎԻԹ-94»ՍՊԸ-ն շտկել են հավելված 1.1-ը և ներկայացրել գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային եղանակով syunik.finans@mail.ru էլ.փոստին:

11. Հայտերը գնահատվել են «ՀՀՍՄԱ-ԳՀԱՊՁԲ-2024/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:Հայտերի գնահատման արդյունքները.

- «ԻՄՓՐՈՒՎ»ՍՊԸ-ի հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին, սակայն հավելված 1.1-ի շտկումից հետո ևս տեխնիկական բնութագրում կարևոր չափանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխ՝բնութագրին, այն է՝ «էկրանը 1.3 դյույմ բարձր լուծաչափով OLED»-ի փոխարեն «էկրանը թվային տեսանելի էկրան »,
«ստեղնաշարը չորս մակարդակի հպման զգայունությամբ»-ի փոխարեն առաջարկվել է «երեք մակարդակի հպման զգայունություն», ուստի **«ԻՄՓՐՈՒՓ»ՍՊԸ-ի հայտը գնահատվել է «անբավարար»:**
- «ԴԱՎԻԹ-94»ՍՊԸ-ի հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին, սակայն հավելված 1.1-ի շտկումից հետո ևս առկա են տեխ՝բնութագրի կարևոր չափանիշների անհամապատասխանություն՝ այն է՝ «էկրանը 1՝3 դյույմ բարձր լուծաչափով OLED»-ի փոխարեն «էկրանը թվային տեսանելի էկրան»,
«ստեղնաշարը չորս մակարդակի հպման զգայունությամբ»-ի փոխարեն առաջարկվել է «երեք մակարդակի հպման զգայունություն», ուստի **«ԴԱՎԻԹ-94»ՍՊԸ -ի հայտը գնահատվել է «անբավարար»:**

- «Կատյա Նազարեթյան»Ա/Ձ-ի հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին, սակայն տեխնիկական բնութագրում կարևոր չափանիշները չեն համապատասխանում հրավերվ սահմանված տեխ⍰բնութագրին, այն է՝ «էկրանը OLED»-ի փոխարեն «էկրանը LCD», «ստեղնաշարը չորս մակարդակի հպման զգայունությամբ»-ի փոխարեն առաջարկվել է «եռակի հպում» ուստի **«Կատյա Նազարեթյան»Ա/Ձ-ի հայտը գնահատվել է «անբավարար»:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

12. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով գնահատման արդյուքները որոշեց «ՀՀՍՄԱ-ԳՀԱՊՁԲ-2024/2» ծածկագրով մրցույթը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

13. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել մրցույթը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Աբգարյան Մարինե

_____ Աթայան Նարինե

_____ Համբարձումյան Մարի

_____ Բաղդասարյան Արփինե

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գրիգորյան Սահականուշ